ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

ք.Գավառ

«23» մայիսի 2024թ.
ժամը 12:00-ին

Մասնակցում էին
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Գ.Բոշյան /նախագահ/,
Ա.Ղուրշուդյան, Ն.Մուխսյան,
Քարտուղար՝ Ս.Թամամավեյան,

ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի մասին

Գ.Բոշյան

1.1) «ԱՐՄ ԴՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն մինչեւ սահմանված ժամկետի ավարտը շտկել է ներկայացրած հայտում տեղ գտած անհամապատասխանությունները:

1.2) «ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ-ն մինչեւ սահմանված ժամկետի ավարտը շտկել է ներկայացրած հայտում տեղ գտած անհամապատասխանությունները:

1.3) ԱՁ Հրաչյա Մուրադյանը մինչեւ սահմանված ժամկետի ավարտը ներկայացրել է հրավերի հավելված N3-ը /մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/՝ առանց ստորագրության և հաստատման, Պարզաբանում վերնագրով փաստաթուղթ՝ առանց ստորագրության և հաստատման և հայտով ներկայացված նախկինում կատարված պայմանագիրը՝ առանց տեխնիկական բնութագրի և հաշիվ ապրանքնագրի:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Ա/Ձ Հրաչյա Մուրադյանի կողմից հրավերի նկատմամբ անհամապատասխանությունները չեն շտկվել, որի փոխարեն ներկայացվել է պարզաբանում ի պատասխան մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից ուղարկած անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցման:

Պարզաբանման մեջ նշել է.

1. ԱՁ Հրաչյա Մուրադյանի կողմից հայտով ներկայացվել է հավելված 3-ը և ներկայացնում է երկրորդ անգամ, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայել է հավելված 3-ը, իսկ 22.05.2024թ.-ին ուղարկվածը դա անստորագիր և անհաստատ փաստաթուղթ է.

2. մասնագետների համաձայնագրերի բովանդակության և մասնագետները ԱՁ Սեդրակ Մուրադյանի լիցենզիայի ներդիրներում հանդես գալու վերաբերյալ և ԱՁ Սեդրակ Մուրադյանը իրեն փոխկապակցված և համագործակցող լինելու վերաբերյալ:

ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի մաս I-ի պահանջներով մասնակիցը պետք է ունենար Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման գործունեության լիցենզիա և ներդիրներ, չունենալու դեպքում կարող էր մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)՝ հիմք 2024 թվականի մայիսի 10-ին ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի հրավերի փաթեթի I-ին մասի 4.3 կետի 5-րդ ենթակետ: Նշենք նաև, որ ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն գնման ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) արգելվում է սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը:

Քանի որ մասնակցի կողմից չի ներկայացվել համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր և հայտով չի նշվել, որ երկու անհատ ձեռնարկատերեր հանդես են գալիս համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով), հետևաբար մասնագետները չեն կարող ներգրավվել առանց համապատասխան լիցենզիայի գործունեություն ծավալվող աշխատանքներին:

3. Ինժեներական մասերի նախագծման մասնագետների համաձայնության անհրաժեշտությունը չկա /չնայած որ ներկայացված են/, քանի որ կա լիցենզավորված կազմակերպության համաձայնությունը, որի ներդիրներում նրանք ընդգրկված են որպես մասնագետներ,

Հրավերի **2.5.2 /«Աշխատանքային ռեսուրսներ»/ կետի համաձայն 3-րդ չափաբաժնի մասով մասնակիցը պետք է ունենար առնվազն 2/երկու/ հոգուց բաղկացած աշխատակազմ՝**

ա) ճարտարապետ՝ առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով՝ համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթերով:

բ) ճարտարագետ՝ առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով՝ համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթերով,

4-րդ չափաբաժնի մասով մասնակիցը պետք է ունենար առնվազն 7/յոթ/ հոգուց բաղկացած աշխատակազմ՝

ա) էլեկտրամատակարարման ոլորտի առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով՝ համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթերով:

բ) ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով՝ համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթերով:

գ) օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման ոլորտի առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով՝ համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթերով:

դ) ջերմամատակարարման և գազամատակարարման ոլորտի առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով՝ համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթերով:

ե) կապի ոլորտի առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով՝ համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթերով

զ) ճարտարապետ՝ առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով՝ համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթերով:

է) ճարտարագետ՝ առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով՝ համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթերով:

Սակայն Ա/Ձ Սեդրակ Մուրադյանի լիցենզիայի **ջրամատակարարման և ջրահեռացման** ոլորտի ներդիրում նշված մասնագետի կամ տվյալ ոլորտի այլ մասնագետի փաստաթղթերը բացակայում են, ինչը վկայում է որ Ա/Ձ Սեդրակ Մուրադյանի կողմից առաջարկվող մասնագետների փաստաթղթերը նույնպես թերի են:

4. Ա/Ձ Հրաչյա Մուրադյան կազմակերպության լիցենզիա ունենալը և կոնսորցիումով մասնակցելը պարտադիր չէ, քանի որ կա համաձայնագիր լիցենզավորված կազմակերպության հետ: Նախագծային աշխատանքների ավարտից հետո բոլոր աշխատակիցների արտոնագրերն ու կազմակերպության լիցենզիաները կցվում են:

Համաձայն ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի մաս I-ի պահանջներով մասնակիցը պետք է ունենար Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման գործունեության լիցենզիա և ներդիրներ և համաձայնագրերի միջոցով ներգրավեր աշխատակիցներ համապատասխան աշխատանքներն իրականացնելու համար: Երկու անհատ ձեռնարկատերերի միջև կնքված համաձայնագիրը չի կարող հիմք հանդիսանալ համատեղ գործունեության իրականացման համար և չի բավարարում հրավերի I մասի 2.6 կետի պահաջներին:

5. Ըստ Ձեր կողմից ներկայացված հայտի՝ պահանջվում է ներկայացնել միայն նախկինում կատարված աշխատանքի պայմանագիրը: Մենք ներկայացրել ենք նաև հանձնման- ընդունման ակտը և արձանագրությունը, ընդ որում արձանագրությունը, որպես ֆինանսական փաստաթուղթ, կարելի է չներկայացնել: Իրավաբանական փաստաթուղթ համարվում է միայն ակտը:

Համաձայն հրավերի «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայության ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Ընդ որում՝ առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում

3-րդ չափաբաժինի համար՝ բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ներդիրների շրջանակներում կատարված

նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների նախկինում կատարված պայմանագրերը:

4-րդ չափաբաժնի համար՝ բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր, կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ներդիրների շրջանակներում կատարված նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների նախկինում կատարված պայմանագրերը:

բ. **սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի, հանձնման-ընդունման ակտ, հարկային հաշիվներ և այլն) պատճենները:**

Ա/Ձ Հրաչյա Մուրադյանի կողմից ներկայացված պայմանագիրը չի պարունակել տեխնիկական բնութագիր, հանձնման-ընդունման ակտում բացակայում է հաշիվ ապրանքագրի սերիան, համարը և դուրս գրման ամսաթիվը: armeps.am էլեկտրոնային համակարգի ուսումնասիրությամբ գնահատող հանձնաժողովին պարզ է դարձել, որ Ա/Ձ Հրաչյա Մուրադյանի և պայմանագրի կողմ հանդիսացող նույն պատվիրատուի պատվիրատվությամբ առկա է մեկ այլ հանձնման–ընդունման արձանագրություն /2021 թվական/, գրեթե նույն գնման առարկայով, մեկ այլ գումարով, պատվիրատուի ղեկավարի տարբերվող ստորագրությամբ, որն էլ գնահատող հանձնաժողովին թույլ է տվել ղեկավարվել հրավերի 8.21 կետի պահանջներով և Ա/Ձ Հրաչյա Մուրադյանից պահանջել տեխնիկական բնութագիրը և հաշիվ ապրանքագիրը՝ ներկայացված փաստաթղթի իսկությունը ստուգելու համար, որոնք Ա/Ձ Հրաչյա Մուրադյանի կողմից չեն ներկայացվել:

Գնահատող հանձնաժողովի իրավասությունների սահմանում է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը:

1.3) «ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ-ն մինչեւ սահմանված ժամկետի ավարտը շտկել է ներկայացրած հայտում տեղ գտած անհամապատասխանությունները:

1.4) «ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ-ն մինչեւ սահմանված ժամկետի ավարտը շտկել է ներկայացրած հայտում տեղ գտած անհամապատասխանությունները:

1.5) «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ն մինչեւ սահմանված ժամկետի ավարտը շտկել է ներկայացրած հայտում տեղ գտած անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Հիմք ընդունելով վերը նշվածները, ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 42-րդ կետը և 2024 թվականի մայիսի 10-ին ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի հրավերի փաթեթի I-ին մասի 8.10 կետի պահանջները **գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների հայտերը գնահատել՝ ղեկավարվելով** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի **1-ին մասի 2-րդ կետով**

1-ին չափաբաժնի մասով՝

- «ԱՐՄ ԴՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

- «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,
- «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Ոչ գնային չափանիշներ		Մասնակիցների անվանումները		
		Մասնակցին տրված միավորները		
Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը	«ԱՐՄ ԴՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ	«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ
Մասնագիտական փորձառություն	40	40	40	40
Աշխատանքային ռեսուրսներ	30	30	30	30
Ընդամենը	70	70	70	70

Մասնակիցները ներկայացրել են հետեւյալ գնային առաջարկները.

N	Մասնակցի անվանումը	Ծառայությունների անվանումը	Նախահաշվային արժեք	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5	6	7
1	«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ	Գավառ համայնքում և գյուղերում փողոցների ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ	20000000	6950000	1390000	8340000
2	«ԱՐՄ ԴՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ			7450000	-	7450000
3	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ			10000000	2000000	12000000

2-րդ չափաբաժնի մասով՝

- «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Ոչ գնային չափանիշներ		Մասնակիցների անվանումները
		Մասնակցին տրված միավորները
Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը	«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ
Մասնագիտական փորձառություն	40	40
Աշխատանքային ռեսուրսներ	30	30
Ընդամենը	70	70

Մասնակիցները ներկայացրել են հետեւյալ գնային առաջարկները.

N	Մասնակցի անվանումը	Ծառայությունների անվանումը	Նախահաշվային արժեք	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5	6	7
1	«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ	Գավառ համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների և մուտքերի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի	1000000	825000	165000	990000

		լրամշակման խորհրդատվական ծառայություններ				

3-րդ չափաբաժնի մասով՝

- «ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,
- Հիմք ընդունելով վերոնշյալը /նախկինում կատարված պայմանագրի տեխնիկական բնութագրի և հաշիվ ապրանքագրի չներկայացնելու փաստը/, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 67-րդ կետի պահանջներով, 2024 թվականի մայիսի 10-ին ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի հրավերի փաթեթի 8.21 կետի պահանջներով, գնահատող հանձնաժողովը որոշեց ստուգել ԱՁ Հրաչյա Մուրադյանի կողմից ներկայացված փաստաթղթերի իսկությունը՝ չխախտելով մասնակցի անմեղության կանխավարկածը: Եթե ստուգման արդյունքում տվյալ մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը որակվեն իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը կմերժվի,
- «ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

4-րդ չափաբաժնի մասով՝

- Հիմք ընդունելով 2024 թվականի մայիսի 10-ի ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 8.10 կետի պահանջները մերժել ԱՁ Հրաչյա Մուրադյանի կողմից ներկայացված հայտը՝ հրավերի մաս I-ի պահանջներին չբավարարելու հիմքով:
- «ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Ոչ գնային չափանիշներ		**Մասնակիցների անվանումները**
		Մասնակցին տրված միավորները
Գնահատման չափանիշը	**Առավելագույն միավորը**	«ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ
Մասնագիտական փորձառություն	**40**	40
Աշխատանքային ռեսուրսներ	**30**	30
Ընդամենը	**70**	70

Մասնակիցը ներկայացրել է հետեյալ գնային առաջարկները.

N	Մասնակցի անվանումը	Ծառայությունների անվանումը	Նախահաշվային արժեք	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5	6	7
1	«ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ	Լանջաղբյուր գյուղի գյուղապետարանի շենքի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ	3000000	2900000	-	2900000

7-րդ չափաբաժնի մասով՝

- «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Ոչ գնային չափանիշներ		Մասնակիցների անվանումները
		Մասնակցին տրված միավորները
Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը	«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ
Մասնագիտական փորձառություն	40	40
Աշխատանքային ռեսուրսներ	30	30
Ընդամենը	70	70

Մասնակիցը ներկայացրել է հետեւյալ գնային առաջարկները.

N	Մասնակցի անվանումը	Ծառայությունների անվանումը	Նախահաշվային արժեք	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5	6	7
1	«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ	Գավառ համայնքում ոռոգման և ջրահեռացման համակարգերի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ	1500000	1250000	250000	1500000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4) Գնումների մասին ՀՀ օրենսդրության եւ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջներին համաձայն, ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հրատապ բաց մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի բավարար գնահատված հայտ եւ նվազագույն գնային առաջարկի հիման վրա **գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

- ընտրված մասնակից ճանաչել 1-ին, 2-րդ, 7-րդ չափաբաժինների մասով՝ «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ին,
- ընտրված մասնակից ճանաչել 4-րդ չափաբաժնի մասով՝ «ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ-ին,
- 3-րդ չափաբաժնի մասով կասեցնել գնահատման գործընթացը 2 /երկու/ աշխատանքային օրով/՝ ԱՁ Հրաչյա Մուրադյանի կողմից ներկայացված փաստաթղթերի իսկությունը ճշտելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5) Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Անգործության ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

2-րդ և 7-րդ չափաբաժինների մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից: Ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

6) Գնահատող հանձնաժողովը որոշեց

Գնման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի մայիսի 31-ին, ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12, 2-րդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Գ.ԲՈՇՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ն.ՄՈՒԽՍՅԱՆ
		Ա.ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ